ԱՆԺԵԼԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

«Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա» հասկացությունները ուսուցչին օգնում են կրթել երեխաներին, նրանց կապել կյանքի և միջավայրի հետ շփման միջոցով, որի ընթացքում կարող են ձևավորվել գիտելիքների, կարողությունների, հմտությունների զարգացած համակարգ:

«Դպրոցը պետք է լինի հանրության դաստիարակության կենտրոն և սովորեցնի այն անհրաժեշտը, որը չի կարող տալ ոչ ընտանիքը, ոչ էլ շրջապատը: Սակայն, եթե սա այսպես է, ապա դպրոցը ոչ միայն ուսուցանող, այլև երեխայի ողջ կյանքը կազմակերպող է, և ամենից առաջ հարկավոր է սովորեցնել ապրել»[1]: Իսկ ի՞նչ են իրենցից ներկայացնում «մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա» հասկացությունները: Այս հարցերի շուրջ կան ուսումնասիրություններ (Բ.Սքիներ,Ջ.Բուներ, Ա.Մասլոու, Հ.Գարդներ, Ս.Վարդումյան և այլոք), սակայն պակասում են գործառնության մասին թեմաները ոչ պետական դպրոցների համակարգում: Հասկանալի լինելու համար, նշենք, որ մանկավարժական տեխնիկան՝ ուսուցչի վարքի, գործելակերպի և սովորողների վրա ներգործման եղանակների ամբողջություն է, որի նպատակն է խթանել աշակերտների ուսումնական գործունեությունը և օպտիմալացնել մանկավարժական գործընթացը: Այլ ձևով՝ մանկավարժը, որն ունի մասնագիտական վարպետություն, որակավորում, ինքնազարգացում, տիրապետում է դասավանդման ընթացքում թեման՝ ճկուն, հստակ, հասկանալի, հասանելի, ըմբռնելի մատուցման ձևերին, ունի ձայնի տեմբրի և ռիթմի դինամիկա, քայլելու ընթացքում դիրքի և ձեռքերի շարժումների հերթագայելու ընդունակություն և հասնում է երեխայի կյանքում դաստիարակչական, կրթական, զարգացման որակներ արմատավորելուն, համոզված կարող ենք ասել, որ գործ ունենք «մանկավարժական տեխնիկա» հասկացության հետ: Մանկավարժական տեխնիկան նպաստում է նաև ուսուցչի հոգեֆիզիկական ապարատի տիրապետմանը:

Մանկավարժական տեխնիկայի էությունը բացահայտելու համար պետք է նկատի ունենալ նրա գործունեության կառուցվածքը, բաղադրամասերը, որոնք անպայմանորեն կապակցում են ուսուցման և դաստիարակու-

[1] П.П.Блонский, Педагогика, М., 1924 г., I т., стр 304

թյան բազում հարցեր ու խնդիրներ և գտնում են դրանք լուծելու եղանակներն ու հնարները, որոնք դրսևորվում են և՛ դասարանում և՛ դպրոցից դուրս կատարվող աշխատանքներում: «Մենք կարող ենք գիտուն դառնալ շատ կարդալով, բայց իմաստուն՝ միայն սեփական իմաստությամբ» /Մոնտեն/:

Երեխայի զարգացումը՝ որպես կենսաբանական էակի, և ուսուցումը՝ որպես զարգացման գործընթացում հայտնվող հնարավորության՝ պետք է առաջ տանել զուգահեռաբար: «Զարգացումը», որն ավելի լայն հասկացություն է, չի տեղավորվում դպրոցական ծրագրերի և պլանների մեջ, իսկ ուսուցումը տեղավորվում է, և երբ իրականացվում է զարգացումը՝ ուսուցումը լիարժեք և արդյունավետ է դառնում: Երեխայի ուսուցումը, զարգացումը պետք է ուղեկցվի դաստիարակությամբ, սոցիալ ակտիվությամբ, քանի որ, շրջանավարտը կանգնելով կյանքի բազմաբնույթ բարդության առջև, անմիջապես չի կողմնորոշվում, թե ուր գնա սովորելու և, կանգնած մնալով արտաքին աշխարհի և իր ներքին աշխարհի անհամապատասխանելիության առջև, բախվում է կրթա-դաստիարակչական ոլորտի գործընթացի և իրականության միջև կասկածներին: Դաստիարակչական տեխնոլոգիան, կարելի է օգտագործել և այն կապել այլ գիտությունների տվյալների հետ, օգտագործելով բանաձևերը, սահմանումները, օրենքները որպես՝ յուրատեսակ գործիքներ: Այսպես՝ գթասրտության դաստիարակության նպատակով կիրառվող բարոյական վարժությունների տեխնոլոգիայի կառուցվածքի հստակ պարզաբանման նպատակով օգտագործվում է մաթեմատիկական թվաբանական պրոգրեսիայի բանաձևը: Տվյալ դեպքում $S_n = \frac{a_1+a_n}{2} \cdot n$ բանաձևը յուրատեսակ գործիք է, որտեղ S_n-ը հաջորդական թվերի գումարն է (գթասրտության կանխատեսվող մակարդակ, նպատակ), որին պետք է հասնել կատարելով ալգորիթմական գործողություններ (անընդհատ վերարտադրվող), առաջին անդամին (գթասրտական առաջին արարք) a_1-ին գումարել տվյալ թվաշարքի վերջին անդամը (արարքը), ստացված գումարը բաժանել 2-ի (դրական և բացասական արարք) և բազմապատկել թվերի քանակով՝ n - ով (ցուցաբերած, կրկնված գթասրտական արարքների քանակով): Ի դեպ այս բանաձևի միջոցով դյուրին է դառնում բարոյական վարժությունների արդյունավետության ստուգումը: Մանավանդ, եթե հարցը տեղափոխ ենք փիլիսոփայական հայտնի ասույթի տիրույթ. մեկ անգամ ցուցաբերած գթասրտությունը՝ պատահականություն է, երկու անգամը՝ բացառություն, երեք և ավելի անգամները՝ օրինաչափություն (նպատակ): Դաստիարակության տեխնոլոգիայի օգտագործումը ենթադրում է դաստիարակչական գործողությունների խստորեն նպատակաուղղված լինելը՝

դաստիարակության նպատակի իրականացմանը, այդ պատճառով կարող է պահանջվել դաստիարակչական գործողությունների հստակ ալգորիթմականացում, քայլերի որոշակի հերթագայության պահպանում: Սա, իհարկե, գալիս է դաստիարակության տեխնոլոգիայի արդեն իսկ ձևակերպված հասկացության ընկալումից. դաստիարակության տեխնոլոգիան բնութագրվում է նպատակների կոնկրետությամբ և կանխատեսելիությամբ, ալգորիթմականացմամբ և քայլերի հստակ հերթագայությամբ, վերարտադրողական բնույթով և հետադարձ կապով, արդյունքների ստուգման միջոցներով ու մեթոդներով: Որպես կենդանի գործընթաց, դաստիարակության գործընթացում հնարավոր չէ այդ բոլոր պահանջներն ապահովել, որքան էլ դրանք ունենան վարքային առօրյա գործողությունների բնույթ, միևնույն է՝ դժվար է անմիջապես կանխորոշել «հայրենասիրություն», «ընկերասիրություն», «ծնողասիրություն» և նման այլ խնդիրների դաստիարակվածության մակարդակը, առավել ևս՝ արդյունքները:

Մանկավարժական գրականության մեջ նման դեպքերում առաջարկվում է ապավինել գիտակցությանը (հայեցողական մակարդակ), այսինքն՝ այդ որակների մասին երեխայի ունեցած գիտակցական ընկալումներին ու նպատակներին[2]: Դաստիարակության տեխնոլոգիան դաստիարակչական նպատակների իրականացման նպատակային ու հաջորդական գործողությունների ամբողջական համալիր է, որը միաժամանակ ենթադրում է արդյունքների ստուգում ու արժեվորում: Որոշ մանկավարժներ (Ս.Դ. Պոլյակով) ցուցաբերում են ծայրահեղ մոտեցում՝ գտնելով, որ տեխնոլոգիան չի ընդունում գործընթացային շեղումներ: Այդ առումով ընդունելի չէ մանկավարժական գրականության մեջ հաճախ հանդիպող դաստիարակության մեթոդիկաների նույնացումը տեխնոլոգիայի հետ[3]: Մենք համամիտ չենք այդ մանկավարժներին, քանի որ դաստիարակչական գործընթացում կիրառվող ցանկացած մեթոդ, հնար կամ տեխնոլոգիա քարացած չէ և գտնվում է մշտական փոփոխության մեջ: Դաստիարակության տեխնոլոգիան ունի ընդհանուր համալիր բնույթ, ուստի այն անխտիր վերաբերում է դաստիարակության բոլոր խնդիրներին, մասնավորապես և՝ բարոյական դաստիարակությանը: Թերևս դաստիարակության տեխնոլոգիան ավելի շատ և ավելի շուտ բարոյական դաստիարակության տեխնոլոգիա է: Միաժամանակ նշենք, որ դաստիարակության և ուսուցման տեխնոլոգիաների մեջ հստակ սահմանազատում չի կարելի կատարել, քանի որ, մեր խնդրառությունը վերաբերում է սովորողներին: Ինչևէ: Այսօր, հրամայաբար դաստիարակողն ու թելադրողը միջավայրն է, և յուրաքանչյուր աճող սերունդ,

---

[2] Беспалько В.П., Слагаемые педагогической технологии, М., 1989 г.

[3] Поляков С.Д., Технологии воспитания, М., 2002 г., стр. 11

ավագ սերնդի հետ շփումներից, իր վրա է կրում նրա սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական արժեքները, փորձում ինքնաարտահայտման և ինքնահաստատման մեջ փնտրել և գրավել իր տեղը: Այսօրվա դպրոցի խնդիրը պետք է լինի զինել ուսուցչին մանկավարժական տեխնիկայով և տեխնոլոգիայով:

«Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը, մանկավարժական տեխնիկայի անքակտելի մասն է, որը ցարգացնում և առաջ է շարժում դիդակտիկական նոր ուղղություններ, որոնց խնդիրն է զբաղվել ուսուցման ռազմավարության ընտրությամբ, կառուցվածքի հետազոտությամբ, իմացական մեխանիզմների ուսումնասիրությամբ և դրանց գործընթացում ներդրված ժամանակակից «տեխնիկական» միջոցների գիտական հիմնավորումների և մեթոդների ներմուծմամբ: «Մանկավարժական տեխնոլոգիա» հասկացությունը առաջադրում է նպատակների, խնդիրների գործունեություն, որոնք պետք է բխեն առկա պայմաններից և երեխայի անհատական առանձնահատկություններից: Չինական ասացվածքն ասում է. «Տուր սովյալին ձուկ և նա կհագեցնի իր սովը: Սովորեցրու նրան ձուկ բռնել և նա երբեք չի սովի»:

Մարդը, որ կրթված է, հնարավորություն ունի աշխատել ու գործել և արդյունքում հարաբերությունների մեջ մտնել այլոց հետ, որից կարող ենք եզրակացնել, որ կան առաջնային անհրաժեշտ հարաբերություններ և կան երկրորդային անհրաժեշտ հարաբերություններ: Առաջնային է համարվում ընտանիքը, դպրոցը: Ընտանիքը՝ որպես սոցիալական կարևոր օղակ, երեխայի վրա ունենում է սոցիալ տնտեսական, բարոյահոգեբանական, մշակութային, իրավիճակային ազդեցություններ, որոնք, որպես կանոն, միատարր չեն և հաճախ այս հանգամանքը հանգեցնում է երեխայի դաստիարակության խաթարմանը: Մանկավարժն, այս առումով զինված լինելով տեխնիկայով և տեխնոլոգիայով կարող է աշխատել ոչ միայն խնդիր ունեցող երեխայի, այլև ծնողների հետ: Նա կարող է տվյալ ընտանիքին օգնել կրթական, հոգեբանական հարցերում, կազմակերպել միջնորդավորված ծառայություններ:

«Մենք հաճախ ենք խոսում ինքնուրույնության (ինքնակայության) մասին: Սակայն հարկավոր է սովորեցնել ինքնուրույնության: Պետք է հասկանալ ինչ է նշանակում լինել ինքնուրույն: Սա անհիշախանություն (անարխիզմ) չէ - ինչ ուզում եմ անում եմ»[4]: Այս իմաստով, ուսուցչի դերը նման իրավիճակներում կարելի է ներկայացնել որպես. խորհրդատու տեղեկատու, խորհրդատու դաստիարակ, հոգատար պաշտպան: Ցավոք, մեր իրականության մեջ եզակի չեն նմանատիպ օրինակները և սոցիալական փոփոխությունները սովորողների արժեքային կողմնորոշվածության վրա ամենաարագն են ազդում, և հաճա-

[4] С.Т.Шацкий, Избранные педагогические сочинения, М., 1958 г., стр 369

խակի լսելով շրջապատում կոպիտ սխալների, այս կամ այն բռնարարքների մասին, սովորողների հոգեվիճակը խեղվում ու խաթարվում է: Եվ, այստեղ է, որ դպրոցի անձնակազմը, «զինված» տեխնիկայով և տեխնոլոգիայով, սովորողի կրթական, դաստիարակչական ու զարգացման մակարդակների աճը պետք է զուգահեռաբար նպատակամղի և համապատասխանեցնի կյանքի բազմաբնույթ բարդությանը, որպեսի նրանք կարողանան իրավիճակները ճիշտ գնահատել, լուծումները դուրս բերեն և որքան էլ, որ գիտատեխնիկական առաջընթացները լինեն նորագույն ու լեցուն վերջին ճիչով, այնուամենայնիվ դրանցից բխող բարդություններն ու խնդիրները լուծում են պահանջում, որի կրողն այսօրվա սովորողն է, ով պետք է կառչի գիտության և կրթության նախարարության տեղին և ժամանակին արված խելացի որոշումներից, դառնա դրանք իրականացնողը, քանզի այս անելով բարձր է պահում հայրենիքի շահերը և վեր չի դասում հասարակականից :

Ոչ պետական սեկտորում գերազանցապես բոլոր խնդիրները և ուսուցման գործընթացը ուսուցչի ուսերին է ծանրանում, իսկ պետականում՝ ծնողի: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դաստիարակության խնդիրների հետ առնչվելիս, ոչ պետական դպրոցներում աշակերտներն ունեն հանդուգն կեցվածք, կողմնապահ են, և հիմնականում բացակայում է հարգանքը իրենց ավագի, մեծի հանդեպ և կարծես իշխում է «շրջանակից դուրս» գործող օրենքը: Սակայն ճիշտ չի լինի նաև ամեն ինչ բարդել ծնողի վրա և որքան էլ, որ այս երկար քննարկված խնդիրներն ունենան իրենց լուծումները, այնուամենայնիվ պետությունն այստեղ մեծ անելիքներ ունի և (թեև պետական և ոչ պետական կրթական առկա մրցակցության վիճակին) պետք է միշտ զգոն լինի, որպեսզի իր իսկ հեղինակավոր դիրքորոշումը լինի պահպանված և պաշտպանված: Ուսուցիչը՝ որպես հրամանատար, որպես մանկավարժական տեխնիկայով և տեխնոլոգիայով զինված մեկը, իր զինվորին՝ աշակերտին, պետք է կրթի, դաստիարակի և զարգացնի նրա աշխարհայացքն ու աշխարհընկալումը, որպեսզի նրա դյուրագրգիռ խառնվածքը, չարախոս միտքն ու լեզուն, վարքն ու բարքը դառնա կառավարելի, նրա մեջ մշակելի դարձնի կորովամտությունը, գուրգուրանքը, ազնվությունը, աշխատասիրությունը, ճշտապահությունը, պահի ու պահպանի իր առողջությունը, գոհունակությունը, բարեկամասիրությունը և ունենա արժանապատվություն, իմացական ուժ, գթասրտություն՝ հասնելու իր նմանին, որը կարող է կարոտյալ լինել ու սփոփել նրան յուր վերաբերմունքով: Այստեղից կարող ենք բխեցնել, որ երեխան իր ծնողի և ուսուցչի համար կամ վարձատրություն է կամ պատիժ, ուրեմն աշխատենք այնպես, որ միշտ իրականացված տեսնենք այս խոսքերի առաջին մասը: